

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Glove box with integrated thermal evaporation system	Glove box with integrated thermal evaporation system	Glove box with integrated thermal evaporation system	KOREA KIYON CO., LTD	Սարքավորումը նաև թաղանթերի սստեցման համակարգի և ձեռնոցատուփի համադրություն է, նախատեսված պերովսկիտային արևային բջիջների, OLED-երի, լիթումային մարտկոցների, և մետաղական էլեկտրոդների և այլ թաղանթների սստեցման համար: Մետաղ-օրգանական նյութերի սստեցման ողջ գործընթացը իրականացվում է իներտ գազի միջավայրում և յուղագերծ գերցածր վակուումային համակարգի միջոցով: Փոշենստեցման սարքը հագեցած է փոշենստեցման 4

աղբյուրներից՝ մետաղական և օրգանական ելանյութերի համար, որոնք ապահովում են միաշերտ գոլորշացում, բազմաղբյուր գոլորշացում և բազմաշերտ նստեցում: Ջերմային փոշենստացման համակարգը ինտեգրված է իներտ ձեռնոցատուփի ձախ պատի վրա: Այն ունի PLC սենսորային կառավարման համակարգ, որը ղեկավարում է մեխանիկական և մոլեկուլային պոմպերը, փականների ավտոմատացումը, նմուշի հարթակը, ջերմաստիճանը, հոսանքի ուժը և լարումը, և այլ պարամետրեր: Փոշենստեցման սարքն ունի դիմային և կողային դռներ: Դիմացի դուռը բացվում է ձեռնոցատուփի մեջ: Կողայինը՝ դեպի դուրս և նախատեսված է սպասարկման համար: Երկու դռներն էլ ունեն 80 մմ դիտարկման պատուհաններ: Ջերմային փոշենստացման համակարգի ներքին խցիկը պատրաստված է Cr18Ni9Ti բարձրորակ համաձուլվածքից, որի չափսերն են 400*400*560 մմ: Ունի DN 150 մմ

արտաձման պորտ, և KF 50 և KF 40
ինտերֆեյսեր: Նմուշի հարթակը
դուրս եկող է, 135*135 մմ չափսերով,
որը թույլ է տալիս տեղադրել մինչև
150 մմ չափսի նմուշ: Ունի պտտման
և մինչև 70 մմ բարձրացման
հնարավորություն: Ինտեգրված
կառավարվող շարժիչը
հնարավորություն է տալիս նմուշը
պտտել 0-30 պտ/ր արագությամբ:
Վակումային համակարգը
բաղկացած է մեխանիկական
պոմպից, որը ապահովում է
առնվազն 9 լ/վ քարշ և մինչև 8*10-4
պասկալ խորությամբ վակում, և
մոլեկուլային պոմպից, որը
ապահովում է 700 լ/վ քարշ և մինչև
5*10-5 պասկալ խորը վակում:
Մետաղական փոշենստեցման
աղբյուր՝ 2 հատ: Պղնձյա, ջրային
սառեցմամբ, սպիրալային պարույր
պարունակող: Վոլֆրամի, մոլիբդենի
և տանտալի գոլորշացման
աղբյուրների հետ
համատեղելիություն (ներառում է
առնվազն 20 հատ մոլիբդենի
աղբյուր): Հագեցած է պնեմատիկ
միջնապով, 0-1500°C տաքացման
հնարավորությամբ, 1 հատ 2000 Վտ

DC հաստատուն լարման աղբյուրից, հոսանքի ուժի առնվազն 0,1 Ա ճշտությամբ կարգավորման հնարավորությամբ: Օրգանական փոշենստեցման աղբյուր՝ 2 հատ 4CC կվարցե աղբյուր, 1 հատ ջերմաստիճանի կառավարման հոսանքի աղբյուր 0,1°C ճշգրտությամբ և 0-500°C տաքացման հնարավորությամբ, +/-1°C ճշգրտությամբ, և պլեկմատիկ միջնապատով: Շերտի հաստության մոնիտորինգի համակարգը թույլ է տալիս փոշենստեցման ընթացքում չափել և կառավարել շերտի հաստությունը $\pm 0.01\text{Å}$ ճշտությամբ և 95% համասեռությամբ: Չափումները պետք է հնարավոր լինի կատարարել 9 կետով՝ (3*3 մատրիքսով): Սարքի հետ մատակարարվում է չիլլեռ՝ 300 վտ սառեցման հզորությամբ, որը ունի սարքի հետ համապատասխան միացման համակարգերը: Սարքը համալրված է օդի կոմպրեսորով, 1600 վտ հզորությամբ: Սարքը հնարավոր է միացնել համակարգչին RS232, USB կամ LAN տարբերակով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЧЧЧ-ЛУДН 2F-25/2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Սնուցումը՝ 380 Վ, 5000 Վտ, 50/60 Հց: Ձեռնոցատուփը իներտ միջավայր ապահովող սարք է, որը ամբողջությամբ ավտոնոմ է: Այն բաղկացած է 3 միմյանց համակցված տուփերից, որոնք պատրաստված են փոշեներկված միաձույլ 304 դասի չժանգոտվող պողպատից, ունեն 3 մմ պատի հաստություն, դիմապակիները 8 մմ

Номер лота	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	<p>Предлагаемый товар</p> <p>հաստությամբ երկկողմ լամինացված և թռծված ապակույց տեխնիկական հատկություններ, որոնք հնարավոր է առանձին-առանձին բեցել դեպի վերև, ֆիքսել, և փակել: Ունեն 2-ական անցերը՝ 200 մմ տրամագծով, որոնցում տեղադրված է երկուական պոլիակրիլատային շրջանակներ, երկուական բութիլային ձեռնոցներ՝ 0,4 մմ հաստությամբ և 800 մմ երկարությամբ (ընդհանուր թվով 6 ձեռնոց): Ձեռնոցատուփերից ծախ կողմինը ունի հետևյալ ներքին չափսերը՝ 1200 մմ (L) x 300 մմ (Խ) x 900 մմ (Բ), իսկ մեջտեղի և ակ կողմի ձեռնոցատուփերից յուրաքանչյուրի ներքին չափսերը հետևյալն են՝ 1200 մմ (L) x 750 մմ (Խ) x 900 մմ (Բ): Ընդհանուր</p>
1					

ձեռնոցատուփերի արտաքին
չափսեր՝ 4000 (L)*810 (Խ)*1880 (Բ)
մմ: Ձեռնոցատուփերն ունեն
4-ական KF 40 ռեզերվային միացման
ելքեր: Ձախ կողմից առաջին
ձեռնոցատուփի հետեից
մոնտաժված է ջերմային
փոշենստեցման սարքը: Սարքը
համալրված է Ցիրկոնիումի օքսիդից
պատրաստված թթվածնի և
խոնավության սենսորներով, որոնց
կյանքի տևողությունը մինչև 10
տարի է, որը կարող է չափել 0-500
ppm խոնավություն և 0-1000 ppm
թթվածին: Մաքրման կայանքը
պարունակում է 6 կգ պղնձե, 6 կգ
մոլեկուլային ցանցեր, 9 կգ
ակտիվացված ածխի ֆիլտրեր՝ 60 Լ
թթվածնի չեզոքացման, 3 կգ ջրի
մաքրման և 3 կգ օրգանական
լուծիչների ադսորբցիայի
հնարավորությամբ: 7 դոլմ
սենսորային կառավարման PLC
համակարգ /Siemens կամ
համարժեք /, վակուումային պոմպ KF
40 միացմամբ, առնվազն 2*10-3 Պա
և 12 Լ/վ արտադրողականությամբ:
Արտահոսք՝ 0,05%/ժ: Ճնշման
կառավարում +/-12 բար: Կողային

երկու անկախ խցիկներ, որոնց չափսերն են $\phi 370 \times 600$ մմ և $\phi 150 \times 300$ մմ: ԼԵԴ լույսեր՝ ամեն տուփում մեկական անկախ լույս: 0,3 միկրոն անցքերով 2 հատ HEPA ֆիլտրի առկայություն խցիկի երկու հատվածներում, 90 մ3/ժ հզորությամբ ազոտի կոնվեկցիայի շարժիչ: 6 դարակաշար նյութերի և պարագաների պահեստավորման համար: Կցված ազոտի գեներատոր: Գեներացված գազի մաքրություն $\geq 99,999\%$: Սարքը նախատեսված է ձեռնոցատուփերին գերմաքուր գազային ազոտի մատակարարման և պահպանման համար: Տեխնիկական պարամետրերն են՝ արտադրողականություն՝ ≥ 17 L / Բոպե: Գեներացված գազի ելքային ճնշում՝ ≥ 8 մթն, գազի առկայության րալոնի ծավալ՝ ≥ 200 L: Սարքի սնուցման պարամետրեր. 220 վոլտ/50Հց, 1000 վտ: Սարքի արտաքին չափսեր՝ 720*620*1300 մմ: Սարքը կառավարվում է ծրագրավորվող թվային համակարգով, հագեցած է մի շարք անվտանգային համակարգերով, ինչպես նաև մուտքային/ելքային

գազերի, բալոնի ճնշման
ցուցիչներով: Աշխատանքային
ռեժիմում սարքի աղմուկը 50 դբ:
Ազոտի գեներատորը համալրված է՝
1) օդի կոմպրեսորով՝ 200 L ծավալով
բաքով, 4 հատ 1600 Վտ անյուղ
մեմբրանային մոմպերով: 2) Օդը
չորացնող ավտոնոմ սարքից՝ Սարքը
նախատեսված է 2,5 մ3/ր օդի
հզորությամբ կոմպրեսորի
արտադրած 8-12 մթնոլորոտ ճնշման
տակ գտնվող գերտաք օդը
սառեցնելու, կոնդենսատը
կուտակելու և ավտոմատ կերպով
այն հեռացնելու համար: Այն
բաղկացած 600վտ կոմպրեսորից,
հովացնող վենտիլյատորից,
հովացման ջերմափոխանակիչից:
Այն ունի եռաստիճան ֆիլտրման
համակարգ՝ ջուրը, օրգանական
միացությունները, փոշին,
բակտերիաները և հոտերը 99,9%
հեռացնելու համար, օդում մաքրված
մնացորդային պարունակությունը չի
գերազանցում 0,001 մգ/մ3 (22°C-
ում), 0,001 ppm (վտ):
Մատակարարը պարտավորվում է
սարքը մատակարարել նշված
հասցեով, տեղափոխել 3-րդ հարկի

					լաբորատորիա, տեղադրել, մեկնարկել և ուսուցանել: Երաշխիք՝ 1 տարի:
--	--	--	--	--	---